

ԿՆՈՋ ԱԶՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՐԱՖՖԻԿԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ

Ա. Գ. ԶԱԼՈՅԱՆ

Մարդկային հասարակության պատմության մեջ ուրույն տեղ է գրավում կնոջ հիմնահարցը: Լինելով երկու սեռերից մեկի կրողը՝ կինը դարեր շարունակ ենթարկվել է խտրականության: Կնոջ նկատմամբ պատմական այդ մեծ անարդարությունը չէր կարող անվերջ շարունակվել: Առաջադեմ մարդիկ դարեր շարունակ բարձրաձայնել են կնոջ ազատագրման, իրավահավասարության հաստատման, խտրականության վերացման հարցերը:

XIX դարում կնոջ ազատագրության հարցը համաշխարհային հասարակության ուշադրության կիզակետ էր տեղափոխվել: Հայ իրականության մեջ նշյալ խնդրին մեծ ուշադրություն հատկացնող մտածողների շարքում նշանակալից դերակատարություն ունենր Բաֆֆին: Բաֆֆու գեղագիտական իդեալը մարդասիրությունն է: Գրողը բարձրացնում է կնոջ կյանքի նպաստավոր պայմանների ապահովության, նահապետական հետամնաց կապանքներից ազատագրելու խնդիրը: Գավառի հայուհու գրական կերպարը Բաֆֆու ստեղծագործություններում ընդելուզված է սնտիապաշտության ու նախապաշարումների քննադատությամբ: Բաֆֆու ներկայացրած իրականությունը իրենդեն է, վավերական, բանաստեղծական լույսով ու ջերմությամբ տոգորում, բնական ու անկեղծ, իմաստավորված ժողովրդի ոգու ցուլացումներով: Ստույգ է, որ ազգի նկարագիրը, բարքերը, ոգին ըմբռնելու համար նախ և առաջ պիտի ուսումնասիրել ու կենդանագրել ավանդույթներով ու սովորույթներով ծանրացած տոհմիկ հայուհու աշխարհը: Խնդրի ուսումնասիրության համաժիրում կենցաղային սովորույթներն ու պատմությունները պատկերագրող գեղարվեստական պատառիկներում գրական կերպավորում է ստանում հայ կինը՝ գունեղ ու կենդանի մանրամասների մեջ: Հոգեբանական նրբին զննումներով է Բաֆֆին բացահայտում գավառի կնոջ խորհրդավոր ու գեղեցիկ աշխարհը, թափանցում նրա մերքին ծալքերի մեջ, պատկերագրում հակասությունների ու ցավերի մի լուռ աշխարհ, ուր մաքուր, անձնվեր սերը գունաթափվում ու խամրում է երազանքների ու համակերպումի լուռ բախումից, ուր ծաղկող հոգու պոեզիան հաճախ է աղարտվում շրջապատի անողորմ ու սառը միջամտությունից, ամուսինների ու ծնողների կամայականություններից: Ավանդական կենցաղի լուսավոր ու ստվերտո կողմերի կենդանագրումով Բաֆֆին կնոջ լիակատար ազատագրության խնդիր չի դնում. ազատագրել կնոջը նահապետական հետամնաց կապանքներից, սակայն պահպանել նրա մեջ դարերով սրբագործված ավանդական լավագույն գծերը: Խնդրի դրվածքն այդպիսին է նաև Մուրացանի «Խորհրդավոր միանձուռի» վեպում:

Յույց տալով կնոջ ծանր վիճակը՝ Բաֆֆին դրա արմատները որոնում է նրա տգիտության ու անկրթության մեջ. «Ինքնըստինքյան հարց է ծագում. արդյոք ինչի՞ց առաջ եկավ կնոջ մի այսպիսի վիրավորական վիճակը, որ նա ձայն չունի ո՛չ ընտանիքի և ո՛չ հասարակության մեջ, որ նա պահվում է անմատչելի ծածկոցի տակ, որպես մի նյութ, որին արտաքին ատոմսֆերայի ազդեցությունը կարող էր փչացնել, որ նա իր անձի տերը չէ, այլ գործ են անում նրան որպես մի սեփականություն, որ գուրկ է անեն իրավունքներից»: Ակնհայտ է, որ հայոց ավանդական ընտանիքը՝ գերդաստանը, բազմամարդ բարդ համակարգ էր, որտեղ համախմբված էին մի քանի սերնդի ներկայացուցիչներ: Բնական է, որ նման ընտանիքում հասարակական-պատմական զարգացման ընթացքում պետք է

¹ Բաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով (Եր., 1955-1965), հ. 9, էջ 358: Այսուհետև Բաֆֆու հատորյակից մեջբերումների հղումները կտրվեն տեքստում՝ նշելով հատորն ու էջը:

ստեղծվեին սեռահասակային փոխհարաբերությունները կարգավորող խիստ նորմեր, որոնք կապահովեին այդ սոցիալական կառույցի կայուն կենսագործունեությունը: Ըստ էության հայկական ընտանեկան համայնքում կին-տղամարդ փոխհարաբերությունները մղված էին երկրորդ պլան: Ընտանիքի ներքին կայունության ու կարգապահության ապահովման հարցում առավել էականը ավագության կարգի պահպանումն էր: Կանանց փոխհարաբերություններն ունեին հիերարխիկ բնույթ: Այդ հիերարխիայում գրաված տեղով էլ, ինչպես փաստում է Բաֆֆին, պայմանավորված էին նրանց իրավասություններն ընտանիքում: Առավել մեծ իրավունքներ ուներ մեծ մայրը, որը ավանդական մշակույթում ներկայացնում էր կին-լիդերի իրական կերպարը: Հայ կինը՝ էթնոսի ամենակայուն ներկայացուցիչը, դառնում էր ազգային ավանդույթների, հավատալիքների հիմնական կրողն ու փոխանցողը: Ընտանիքի իզական սեռի անդամների մեջ ամենաիրավագուրկը, ինչպես նկատում է Բաֆֆին, նորահարսերն էին, որոնց նկատմամբ արգելքներն ամենաշատն էին և ամենախիստը: Վերջիններս զրկված էին ազատ տեղաշարժվելու, հաղորդակցվելու և արտահայտվելու իրավունքից: Բաֆֆին այն միտքն է արտահայտում, որ կնոջ մասին հասարակության բարոյական պատկերացումը տնտեսական պայմանների արդյունք է: Նացույց է տալիս, որ հետամնաց կյանքը, չարքաշ աշխատանքը ստիպում են գյուղացուն մեծ գերդաստաններով ապրել, որպեսզի աշխատանքը ավելի արդյունավետ դառնա: Գերդաստանի ամբողջության շահը պահանջում է, որ կանայք ենթարկվող լինեն, որպեսզի իրենց վեճերով չպառակտեն մի քանի ընտանիքներից բաղկացած աշխատանքային այդ միավորումը: Այս հանգամանքը ստեղծել է բարոյական յուրատեսակ մի պատկերացում, ըստ որի կնոջ արժեքը նրա հնազանդության, կրավորական լինելու մեջ է: Բաֆֆին կարծում է, որ աշխատանքի միջոցների զարգացման հետևանքով մեծ գերդաստանների տրոհվելը թույլ կտա կնոջ մասին այլ պատկերացում մշակել: Այն վայրերում, ուր կանայք տնտեսության մեջ զլխավոր դիրք են զբաղում, մեծ արտոնություններ ունեն: Նա օրինակ է բերում Սավրա գյուղը, ուր կանայք հասարակության լիարժեք անդամներ են, քանի որ նրանց խաչագող ամուսինները թափառական կյանք են վարում, և տնտեսության ղեկավարումը մնում է կանանց («Խաչագողի հիշատակարանը»): Ուրեմն, ըստ Բաֆֆու, կնոջ իրավագրկության բուն պատճառը ոչ այնքան մահմեդական ազդեցությունն է և մանավանդ տղամարդու բռնասիրությունը, որքան բազմամարդ ընտանիքներով ապրելու անհրաժեշտությունը: «Մի այսպիսի ընտանիքի ամբողջությունը և ներդաշնակությունը պահպանելու համար, արևելյան հայացքով, շատ բնական էր, որ կնիկներին ձայն և իրավունք չտրվեր» (9, 358): Պակաս նշանակություն չի տրվում և արտաքին աշխարհին: «Տիրող ազգերի բռնաբարությունները ստիպեցին քողի տակ պահել նրան: Մի արաբական խալիֆա ասում է. «Երկու բան պետք է ծածուկ պահել օտարի աչքից, մեկը՝ փողը, մյուսը՝ կինը»: Այդ խրատը արևելքի պահանջն էր» (9, 358):

«Հայ կինը» հողվածում իր հետագոտությունը Բաֆֆին սկսեց գյուղացի կնոջից, նրա իսկ ծնունդից: Հասարակության մեջ գործող կարծրատիպերն այնքան ուժեղ էին, որ երբ ընտանիքում աղջիկ էր ծնվում, այդ ընտանիքի բարեկամները չէին գնում շնորհավորելու, կամ, ինչպես ասում են, «աչքալուսանք» տալու ծնողներին: Այս իրողության վերաբերյալ Բաֆֆին հարց է տալիս. եթե չլինե՞ր աղջիկը, ապա ինչպե՞ս էին ծնվելու տղաները: Չէ՞ որ հենց կինն է կյանքի աղբյուրը: Սակայն առավել ցավալի է, որ այդ նույն աղջիկը, որն ամեն ինչից զրկված է եղել, մայր դառնալով, իր դստեր հետ ճիշտ նույն կերպ է վարվում: Բաֆֆու հողվածում տեղ է գտել մի զարեուրելի փաստ. «Աղջկա մահը, ինչ կերպով և հասնելու լինե՞ր, պատճառում է ծնողներին ներքին քավականություն: Ավելորդ բեռը հեռացվում է ընտանիքից» (9, 321): Աղջիկներն ու կանայք իրենց գործողությունների մեջ չափազանց շատ էին կաշկանդված: Ավելին, փողոցում տղամարդու հանդիպելիս, բացի գլուխ տալուց, պետք է մոտենային և համբուրեին տղամարդու ձեռքը: Գյուղացի աղջկա ամուսնությունը իրենից ոչնչով կախված չէր, փաստում է Բաֆֆին: Գուցե զարմանալի թվա, քայց աղջկան երբեմն ամուսնացրել են, երբ նա դեռ մոր արգանդից լույս աշխարհ չի եկել (տե՛ս 9, 329) կամ էլ դեռ օրորոցում էր: Ցավոտ իրականության տխուր

ամորադարձ է «Ուխտյալ միանձնուհի» արտավածքը: Թախծի անեզրության սարսուռ է անցնում պատումի էջերով. «Օրիորդ Սոնան-դեռ յուր մոր արգանդումն էր, երբ նրա ծնողները ուխտեցին՝ եթե աղջիկ լինի՝ նվիրել տուրք աստվածածնին աղախիմ դառնալու»: Պատմելով Սոնայի դժբախտ ճակատագրի մասին՝ Բաֆֆին ցավով արձանագրում է, որ հայ ընտանիքներում աղջիկը սեփական կամք, զգացումը չունի, «նրա բոլոր գոյությունը պատկանում է ծնողներին», մանավանդ երբ հարցը կրոնական էր: Դատը իրողությունների կենդանագրումով պատկերվում է մի սրտառուչ ողբերգություն: Պատումի էջերում այրող ներքին ցավը համակում է ընթերցողին, ցավ է ծորում, թախծի ու բողոք՝ նախապաշարումներով թանձրացած մոռյալ աշխարհի դեմ. «Կուսանցը նվիրել յուր դուստրը, նրա կամքին ընդդեմ, միևնույն է, որպես նրանք իրանց անասուններից մինը նվիրում են այս կամ այն ուխտատեղին գոհվելու համար: Անասունի ողորմելի բառաչմունքն ոչինչ արգելք չէ կարող դնել նրա տիրոջ բարեպաշտական նպատակին, մանավանդ երբ մի այդպիսի վարմունքը շահում է ամբողջի համակրությունը»: Գրողը փաստում է, որ թե՛ «Փարենխանաներում» և թե՛ նրանցից դուրս կինը կատարելապես իրավագուրկ է, ոտնահարված է իբրև մարդ և հաճախ գոհաբերվում է ոչ միայն բռնակալների անզուսպ կրքերին, այլև ծնողների կամայականություններին: Պատճառն այն է, որ աղջիկը գնահատվում է որպես ապրանք. «Աղջիկը կովից էլ, էշից էլ վատ է էլած. ինչկի փող չիս տալիս, չին տանում... Էտ է պատճառը, վուր եփ մարդու տանը մե քանի աղջիկ կա, նա բազարում էտիբար (վստահություն - Ա.Զ.) էլ չէ ունենում» (2, 97-98), - նկատում է Ճանձուր Իվանիչը: Աղջիկը «կեղծ դրամ» է. այսպես են դատում նաև բալզակյան հերոս Տայֆերը (միլիտատեր Տայֆերը Վիկտորիանային տնից դուրս է վռնդել օժիտ տալու տե՛սած հոգսից ազատվելու նպատակով («Հայր Գորիո»), Դիկենսի՝ Դոմբին (Դոմբին ատում է Ֆլորենսին, քանի որ աղջիկը «օգուտ չբերող» ապրանք է («Դոմբի և որդի»)): Խտրականությունը կնոջ հանդեպ շարունակվում է նաև ամուսնությունից հետո, և նա մեկընդմիջտ կորցնում է «ազատությունը». «Աղջիկը կարող էր ոտքը դուրս դնել հոր տան շենքից, գնալ դրացիների տները: Իսկ այն օրից, երբ նա նշանվեցավ մեկի հետ, նա իր բոլոր հարաբերությունները կտրում էր դրսի աշխարհի հետ. նա դառնում էր իր տղամարդի սեփականությունը. նրա աշխարհը լինում էր ամուսնի տան չորս պատերը... Նա ապրում էր իր ամուսնի համար, որպես նրա ծածկյալ և վարագուրված սրբությունը, որի ներսը նայելու ոչ ոք կարող չէր: Մանկություն և զառամություն՝ երկու հակառակ ծայրեր, որոնք ավելի չէին ենթարկվում ընտանեկան խստությունների պահանջներին» (5, 512-513): Տգիտության ու այրերի քմայքների տակ ճնշված, ճակատի քրտինքը հաճախ իր անձկությունների մրուրին խառնելով՝ անհամարձակ ձգտումներով է խնդրվում դեռատի կնոջ բարոյական ու ֆիզիկական նկարագիրը՝ քողարկված պարկեշտությամբ ու հնազանդությամբ, ծրարված հույզերով ու մորմոքներով: Բաֆֆին ավանդական կացութաձևի լայն հենքի վրա է անդրադառնում կանանց իրավագուրկ վիճակին, քննաբանում գեղջկական կենցաղի ցավոտ խնդիրները: Միամիտ ու խոնարհ գեղջկուհին չէր կարող խորհել ինքնուրույնության, արժանապատվության, կյանքի հեքիաթը ըմբռնելու ու վայելելու մասին: Ամուսնու նա տեսնում է միայն գիշերով, որի հետ պետք է խոսեր գաղտնի, երբ մի երրորդ անձ ներկա չէր: Հոր տանը նրա երեսը բաց էր, իսկ այստեղ նրա դեմքը ծածկված էր թանձր կարմիր քողով: «Երեսը բացված կին է» գյուղացու լեզվում մույն էր, թե անբարոյական է: Հայ կինը պարտավոր էր յոթ տարի չխոսել: Երբ այդ շրջանն անցնում էր, հասակավոր կանայք հավաքվում էին և հանդիսավոր կերպով նրա «քողը փոխում», այսինքն՝ կարմիր քողի փոխարեն գցում էին սպիտակը, և այդ օրից նա երեսը կիսով չափ բաց անելու արտոնություն էր ստանում: Նա արդեն իրավունք ուներ ընտանիքի մի քանի անդամների հետ խոսել, բայց ոչ սկեստրի և սկեսրայրի հետ: «Կարճ ասած, կինը այն ժամանակ միայն հասարակության անդամ է դառնում (իր նեղ մտքով), գրում է Բաֆֆին, - երբ պառավում է» (9, 331): Ամբողջ օրը նա անցկացնում է ոտքի վրա, գիշերն անկողին է մտնում, երբ ընտանիքի բոլոր անդամները քնած են լինում, իսկ վաղորդայինն արթնանում է բոլորից վաղ: Նա այն աստիճան համբերատար է, որ շատ անգամ քավական ծանր հիվանդություններ տանում է ոտքի վրա՝ ոչ ոքի իրավունք չունենալով

հայտնելու իր տկարության մասին: Բաֆֆին փաստում է, որ ամուսինը կնոջ հետ վարվում էր նույն անգթությամբ, ինչպես իր վարող եզան կամ գոմեշի հետ: Գյուղացի կինը սիրելի չգիտեր. ինչպես նրա ձեռքերն էին կոշտացել աշխատանքի մեջ, այնպես էլ սիրտն էր կորցրել զգայականությունը: Երբ ամուսնու մասին խոսք էր բացվում, կինը համարձակություն չուներ նրա անունն անգամ բաժրածայն արտասանելու. միշտ օգտագործում էր «նա» դերանունը: «Կինը հպատակվում է տղամարդին անպայման հնազանդությամբ... Կնոջ դերը կրավորական էր, իսկ տղամարդինը՝ ներգործական» (9, 336-337): Այստեղից էլ, ըստ Բաֆֆու, կինը չէր կարող ներգործել և «փափկացնել տղամարդի բարքի կոշտությունը»: Տղամարդը միշտ իրեն բարձր էր դասում կնոջից և այն համոզմունքն ուներ, թե «կնոջ ծամը երկար է, բայց խելքը՝ կարճ»: Տղամարդը կատարյալ տեր էր, կինը՝ հպատակ: «Ընտանիքի կազմակերպությունը, որ ենթարկում է կնոջն անպայման հնազանդության, որ խլում է նրանից ամեն ազատություն՝ մի այսպիսի խիստ միապետական կազմակերպությունը անկարելի է որ չհասցներ կնոջը միակողմանիության, անշարժության և վերջապես՝ բթամտության: Ավելացնենք անդադար և միակերպ աշխատությունը, որ շինում է կնկանից մի մեքենա. մի ողորմելի կրավորական էակ,- այն ժամանակ կպարզվի նրա մտավոր վիճակը» (9, 337): Այսպիսի պայմաններում, ըստ գրողի, կնոջ խելքը չէր կարող զարգանալ: Անընդհատ և դժոխակ աշխատանքը ազդում է ոչ միայն գյուղացի կնոջ մտավոր զարգացման, այլև ֆիզիկական կազմվածքի վրա. նա կորցնում է իր քարմուքությունը և դեռ երեսուն տարեկանին չհասած՝ պատավում է: Բաֆֆին ցավով է նկատում, որ հայ կնոջ աչքերը, որոնք բնությունից այնքան գեղեցիկ են, փչանում են ծխի ու փռու մեջ: Ծանր աշխատանքի ու ընտանիքի ճնշման ներքո կինը իսպառ կորցնում է իր ուրախությունը. նա երբեք չի ծիծաղում, նա միշտ տխուր է. «Նրա մեջ չկա բնավորության և այն զվարթությունը, որ հատուկ է մինչև անգամ վայրենիներին: Ով գործ է ունեցել գյուղացի կնոջ հետ, գիտե, որ նրա սիրտը մեռած է...»: Փաստ է նաև, որ եթե կինն ամուլ էր, ապա պատիվ չուներ ինչպես ընտանիքի, այնպես էլ հասարակության մեջ. «Նրա վրա նայում են որպես չբերք կովի»: Ամուսնական անհավատարմությունը խիստ հազվադեպ է գյուղերում, տեղեկացնում է Բաֆֆին, իսկ եթե լինում են օրինակներ, պատժվում են մահով. խանդոտ տղամարդը գաղտնի կամ բացահայտ սպանում է նրան, և հասարակական կարծիքը արդարացնում է ամուսնու այդ եղեռնագործությունը: Իսկ եթե ամուսինը հանդուրժում է կնոջ անառակությունը, նրա ընտանիքը «տուրս է ձգվում» գյուղական հասարակությունից:

Գավառական քաղաքում կնոջ դերը այլ էր: Ամուսնության առաջին ամիսներից վերանում էր ամուսնական սիրո ջերմությունը, սառնությունն աննկատելի օտարացնում էր ամուսիններին, սկսվում էր ընտանեկան դժոխքը: Տղամարդն ուներ իր աշխատանքը, իր զվարճությունները, նա այնքան զբաղված էր լինում իրենով, որ համարյա մոռանում էր, թե կին ունի: Կինն էլ իր կյանքը պիտի տնօրիներ: Այս գործում նրան առաջնորդում էր մոր օրինակը: Նա անում էր այն, ինչ որ տեսել ու սովորել էր մորից: Այցելություններ էր կատարում, զբոսանքի էր գնում, տանը երեկոյթներ էր կազմակերպում:

Մղջկան փոքր հասակից կրթում էին, եղկում: Նա դառնում էր մի «մոդնի կուկլա», որը ոչ սիրտ ուներ և ոչ միտք: Տիրապետում էր վարվեցողության կանոններին, գիտեր կաշաղակի նման շատախոսել, բայց չգիտեր մտածել: Ծնողներն էին տնօրինում նրա ամուսնական բախտը: Ամուսնուց շուտ ձանձրանում էր, որովհետև նրա սիրտը չէր սովորել երկար սիրել մեկին, իսկ տղամարդն էլ կնոջ մեջ տեսնում էր ընդամենը երկու արժանիք՝ նրա մարմնական գեղեցկությունը կամ հարստությունը:

Նկատելի է և մեկ ուրիշ երևույթ: Նորամուտ բարքերը որոշակի ճեղքեր են բացում հայ ընտանիքի ու ավանդական ընթրումների մեջ: Կինը ժողովրդի ցածր և միջին դասերի մեջ պահպանել է իր ցեղական առանձնահատկությունները, հավատարիմ է մնացել իր ազգային յուրահատկություններին, խոսում է մայրենի լեզվով, հետևում է ավանդույթներին և չի հեռացել իր մայրերի սովորություններից: Իսկ բարձր դասի կինը (բացի գավառներից) արդեն սկսել է օտարանալ. չի խոսում մայրենի լեզվով և նողկանքով է նայում ազ-

գային ավանդույթների վրա: Այսպիսի տխուր երևույթներ մատնանշելուց հետո Բաֆֆին առաջադրում է հետևյալ հարցը. արդյոք կրթությունը վնասակա՞ր էր, «թե կհնն իր մեջ հիմք, ամբողջում չուներ, և կրթության լույսը ու ջերմությունը նրան մոտեցրածին պես նա լուծվեցավ, իր բաղադրությունը փոխեց»: Բաֆֆին վկայակոչում է այլ պատճառներ. «Կանացի ամբողջ պահպանել է իր անարատությունը, իր կատարյալ մաքրության մեջ. դա, թեև անմշակ, բայց չափազանց արգավանդ հող է, որ հմուտ երկրագործի ձեռքում կարող է հրաշալի պտուղներ ընծայել: Փույթ չէ, եթե ամբողջի մակերևութից բարձրացած առանձին մասերը ցույց են տալիս մի քանի փտության նշաններ»: Գրողը ափսոսանք է հայտնում, որ ժողովրդի բարձր դասի մեջ, ուր կհնր թե՛ իր դիրքով և թե՛ կրթությամբ նշանավոր տեղ է գրավում, փոխանակ բարոյապես ներգործելու իրենից ցածր աստիճանների վրա գտնվող իր սեռակից քույրերի վրա, ինքն է դառնում վատ օրինակ՝ տարածելով շոսալություն և բարքերի ապականություն: Տգիտության ու այրերի քմայքների տակ ճգնված, անհատականությունը և կամքը օտարած, կատարյալ համակերպությամբ և անհամարձակ ձգտումներով ապրող հայուհին իր մեջ նիրհող կարողությունների դաստիարակությամբ կարող է հրաշքներ գործել՝ սերունդը շարունակող զավակների մեջ բեղմնավորելով մտավոր գեղեցիկ ունակություններ. «Մենք՝ ասիացի կանայքս, քանի-քանի հազարավոր մղոններ հետ ենք մնացել Եվրոպացի կանանցից, որոնք իրանց լուսավորությամբ և մաքուր բարոյականությամբ - պակաս չեն մարդկանցից - ասում է տ. Սալլաթինը: Նրանք միշտ առաջ, դեպ առաջ են դիմում, բայց մենք մնում ենք դարավոր անշարժության մեջ, կապված, կաշկանդված տգիտության շղթաներով» (1, 180):

Դեռևս իր վաղ շրջանի ստեղծագործություններում Բաֆֆին, բողոքելով հասարակության մեջ գոյություն ունեցող բոնության բազմազան դրսևորումների դեմ, դրա վատթարագույն ձևը համարում էր կանանց նկատմամբ եղած ճնշումը: «Հազարապատիկ դժնդակ և վատթար է այն բոնությունը,- գրում է «Սալթիի» հեղինակը,- որ ասիական կյանքի մեջ ուռնակոխ է արել կանանց սեռի արդար իրավունքը, ճնշել ու կաշկանդել է նրանց ազատությունը»: Սակայն նա հավատացել է, որ ի վերջո «կգա կնոջ ազատ իրավունքը», իսկ կհնն առանց լուսավորվելու ի վիճակի չէ հասկանալու ազատության նշանակությունը և պայքարելու դրա համար: Ուրեմն կնոջ ազատությունը պետք է նախապատրաստվի նրա կրթությամբ ու դաստիարակությամբ: «Դպրոցից կհնր ստանում է իր ազատությունը: Այստեղ պատրաստվում է նա փշրել, խորտակել այն դարավոր ստրկության շղթաները, որ սև նախապաշարմուքի գործությամբ կաշկանդել էին նրան: Դպրոցը դարձնում է նրան իր կորցրած արտոնությունը՝ մարդ և մարդկային հասարակության անդամ կոչվելու»: Սակայն գրողը մտավախություն է հայտնում, որ իրեն տրված ազատությունը կհնր կարող է ի չարս գործադրել, որը կդառնա նրա բարոյական կործանման պատճառը: «Քանի կհնր բարոյապես և իմացականապես լավ չի կրթված իբրև մարդ,- գրում է Բաֆֆին,- նա չունի իրավունք պահանջելու ազատություն կամ հավասարություն: Կրթությունը կտա նրան իրավունք ներս մտնել հասարակական կյանքը որպես մարդ, յուր կատարյալ ազատությամբ» (2, 157):

Բաֆֆին նկատում է, որ մարդկության կեսը՝ իգական սեռը, կտրված է հասարակական գործունեությունից: Նա պահանջում է կնոջը դուրս բերել ընտանեկան փակ շրջանակներից և մասնակից դարձնել հասարակական կյանքին՝ նպաստելով վերջինիս առաջընթացին. «Մարդկային հասարակության մեջ բարի գործերն ավելի հաջողությամբ կկատարվեն, - գրում է նա,- երբ գործիչների թվում մասնակցեն և կանայք» (5, 211-212): Կնոջը հասարակական ասպարեզ դուրս բերելու, նրանից հասարակական գործիչ պատրաստելու գործում Բաֆֆին անգերազմահատելի է համարում լուսավորության դերը: «Մեծ բարերարություն արած կլինի կնոջ սեռին այն մարդը, որը լուսավորության կայծը կմտցնի ամենախառլ գյուղական խրճիթներում,- գրում է նա,- այդ լույսը միայն կարող է նրան առաջնորդել և, դուրս բերելով տմային փակ շրջանից, կանն նրան հասարակության

² «Մշակ», 1877, թիվ 89:

ընկերության անդամ» (9, 360): Սակայն, խոսելով կնոջը հասարակական կյանքին մասնակից դարձնելու մասին, Բաֆֆին զգալիորեն զիջում է իր ժամանակակից Ադայանին ու Ծերենցին (որոնք հասարակական գործունեության ոչ մի սահմանափակում չեն ճանաչում և վստահում են կնոջը մինչև անգամ երկրի ղեկավարումը)՝ հատկացնելով նրան միայն տանտիկնոջ, մոր, խանութպանի և ուսուցչուհու դեր. «Ես հեռու եմ պահում ինձ այն ծայրահեղությունից, որ կինը բժիշկ լիներ, գրող լիներ, կամ դատավոր լիներ...» (9, 352):

Վերստին հաստատելով այն դրույթը, թե «կինն է մարդկային ընկերության քաղաքակրթիչ տարրերից մեկը»՝ Բաֆֆին իր բանախոսություններում քննական վերլուծության է ենթարկում ընտանեկան, կենցաղավարական, սոցիալական, գաղափարական ու լորտի հարցերը՝ ազգային կյանքի զարգացման հետանկարի մեջ բեկելով կնոջ մեծ հասարակական կոչումը. «Կինն իր նորը խելքով և հրապուրիչ բնավորությամբ կարող է լինել մի լավ կապ գործող ուժերի մեջ: Նրա սալոնում կարող էին մշակվել և հասունանալ ամեն տեսակի հասարակական խնդիրներ: Եվ կինը կարող էր առաջնորդել և խրախույս տալ գործող անձինքներին իր ձեռքում որպես գործիք վարելով տղամարդին: Եվ ոչ միայն ժողովրդի բարձր դասի մեջ, այլ իջնելով դեպի ցած, կինը կարող էր հայտնվել որպես ազդող ոգի, որպես ներգործող ուժ» (9, 380): Բաֆֆին կանանց կրթությունն առանձնապես կարևոր էր համարում ընտանեկան դաստիարակության վիճակը բարելավելու, երեխաների սկզբնական դաստիարակությունը բարձր հիմքերի վրա դնելու տեսանկյունից. «Բարեկիրթ երեխաներ ստանալու համար նախ պետք է պատրաստել ուսյալ մայրեր»³: Բաֆֆին պահանջում էր կնոջ լուսավորությունը միջոց դարձնել առողջ ընտանիքներ ստեղծելու համար, քանի որ հասարակության հետամնացությունը և աղջիկների չլուսավորվածությունը հնարավորություն չեն տալիս կազմելու առողջ ընտանիքներ: Նրանք ամուսնանում են իրենց ծնողների կամքով, մույնիսկ մինչև ամուսնության օրը չեն էլ տեսնում իրենց փեսացուին: Համարելով, որ իսկական «ընտանիքի հիմքը սերն է», Բաֆֆին եզրակացնում է, որ նման պայմաններում չի կարող փոխադարձ սեր լինել զույգերի միջև, ուստի ընտանիքն էլ չի կարող կայուն լինել: Իսկական ընտանիքում կինն ամուսնու գործակիցն է, նրա հետ հավասար քաշում է ընտանեկան կյանքի լուծը: Իսկ դրա համար ևս անհրաժեշտ է, որ կինը կրթություն ստանա. «Կինը, իբրև տղամարդի հավատարիմ ընկեր, իբրև նրա օգնական, այն ժամանակ միայն կարողանում է զուգապատշաճ լծորդությամբ առաջ տանել նրա հետ թե՛ ընտանեկան և թե՛ հասարակական գործեր, երբ տղամարդի չափ հմտություն ու կրթություն ունի»⁴:

Վերջապես, Բաֆֆին լավագույն ընտանիքի հիմքը համարում է նաև կնոջ և ամուսնու գաղափարների ընդհանրությունը: Եթե դասային հոգեբանության զգացումը անհաղթահարելի պատմեշ է ձգում Սանանի և իր ազատարարի միջև («Վաշազգողի հիշատակաբան»), ապա համանման իրավիճակը հոգեբանական այլ լուծում է ստանում բժշկի և իր կնոջ կյանքի պատմության սյուժեում: Այստեղ նույնպես սերը բախվում է հասարակ ծագումով բժշկի և ազնվատոհմ օրիորդի դասային նախապաշարմունքին, բայց, հակառակ ծնողների կամքին, աղջիկը նախընտրում է բժշկին՝ սկզբունք ունենալով ոչ միայն զգացմունքի բնական կապը, այլև «մտքերի, ձգտումների և գաղափարների համերաշխությունը»: Այստեղ Բաֆֆին հայտնաբերում է կնոջ իդեալը: Լինելով լուսավորված և բարձր գաղափարների տեր՝ այս ընտանիքի կինը մեկն էր այն հազվագյուտ կանանցից, որոնք չեն ձգտում հաճոյանալ տղամարդուն իրենց կանացիությամբ, չեն բավականանում նրան օգնելով, նրա հոգսերը կիսելով «միմիայն խնայող տնտես և լավ տանտիկին լինելով», այլ որոնք պաշտում են տղամարդու իդեալները, նպաստում են նրանց իրագործվելուն. «Այդպիսի լծորդության մեջ կինը դառնում է այն գերագույն ոգին, որից միշտ ներշնչված է լինում տղամարդը, այսպիսի լծորդության մեջ տղամարդու եռանդը երբեք չի մեռնում» (2, 600):

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

Ինչպես տեսնում ենք, Բաֆֆին կանանց կրթության հետ մեծ հույսեր էր կապում. «Որպես մի հասարակության, նույնպես և մի ամբողջ ազգի մեջ կրթության գործը հաջողված է համարվում այն ժամանակ միայն, երբ նրա կանայքը լուսավորված են»³: Այս պատճառով գրողը պահանջում էր հասարակության լուսավորության գործը սկսել կանանց կրթությունից. «Եթե պետք է սկսել մեր ժողովրդի կրթության գործը, սկիզբը դնելու է անպատճառ կանանց կրթությունից» (3, 211): Սակայն նա ցույց է տալիս, որ ժողովրդի խավար նախապաշարմունքը մեծ արգելք է կանանց կրթության ճանապարհին: Հենց իրենք՝ կանայք էլ ներշնչված են այն մտքով, թե գրագիտությունն իրենց համար ավելորդ շռայլություն է. «Աղջիկն ի՞նչ կանե կարդալը, - ասում է Բաֆֆու հերոսուհիներից մեկը, - աղջիկը խոստերտեր կամ վարդապետ չի՞ դառնալու»: «Աղջկան՝ կարն է ու ասեղը. տղային՝ գիրն է ու գրիչը» (8, 401), - ասում է մեկ ուրիշը: Ե՛վ ընտանիքում, և՛ նրանից դուրս աղջկան նախապատրաստում են սոսկ տնտեսուհի լինելու համար: Աղջիկը միշտ լսում է խոնարհ և հնազանդ լինելու մոր ամենօրյա և տաղտկալի խրատները: «Նրա միտքը, սիրտը և հոգին ճնշում են հին նախապաշարմունքների ներքո, և խլում են նրանից ամեն մի ազատ, ինքնուրույն զարգացում: Նա դառնում է մտավորապես խղիտ, բայց բարոյապես հրեշտակ» (9, 363): Խոսելով կանանց կրթության անհրաժեշտության մասին՝ Բաֆֆին պահանջում է տղաների և աղջիկների համատեղ ուսուցում, որը կվերացնի հասարակության երկու սեռերի միջև դարերով գոյություն ունեցող անջրպետը, ինչպես նաև կնպաստի նրանց մտավոր զարգացման տարբերությունները հաղթահարելուն: Համատեղ ուսուցումը Բաֆֆին կարևոր էր համարում նաև կանանց բարոյականության շահերի տեսակետից: «Զահրումար» վեպում նա նկարագրում է, թե ինչ կործանարար հետևանքներ է բերում առանձին ուսուցումը: Պանսիոնում ուսանելու տարիներին մեկուսացած կյանքը Սոֆիի մեջ տղաների նկատմամբ տարօրինակ նախապաշարմունքների հետ միասին ներարկել էր նաև անսահման հետաքրքրություն, որից նա աշխատում է օգտվել պանսիոնի փակ կյանքից ազատվելու առաջին իսկ օրերից: Կանանց ինքնագործունեության հետ գրողը սերտորեն առնչում է նաև նրանց ինքնակրթության հարցը: Մայրերի թե՛ մտավոր զարգացումն ընդհանրապես և թե՛ մանկավարժական որոշ պատրաստությունը մասնավորապես անհրաժեշտ են երեխաների հետ վարվելու և նրանց զարգացումը ճիշտ ուղղությամբ տանելու համար՝ առանց դիմելու ֆիզիկական ուժի: Մալբիի մոր մասին նա գրում է, որ և ինքն էր ծեծում իր աղջկան և դաստիարակներից պահանջում, որ «նրա միսն առնեին, ոսկորը թողեին, որ բան սովորե և օրինավոր կին դառնա»: Վեպում մի հատված կա, որ կրում է «Հին և նոր» վերնագիրը: Ըստ էության սա այն հանգույցն է, որից երևում է վեպի գաղափարական կոնֆլիկտը: Հնի և նորի բախումը սկիզբ է առնում տարերայնորեն և միանգամայն անակնկալ ընթացքով: Մալբին կասկած է հայտնում մոր՝ տիկին Թարլանի բժշկական հմայությունների հանդեպ և հեզմունքով նրա պատմած հրաշապատում հեքիաթները: Հակառակ մոր կամքին՝ Մալբին հետևում է ավանդական պարկեշտությունը խախտող կենցաղավարության և այն հանգամանքը, որ նա ավետարանական սրբապատկերների փոխարեն երկրպագում է ազգերի գրականության մեջ «երևելի մարդոց պատկերներին», արդեն գուշակում է միֆական մի ամբողջ աշխարհի կործանում ու Նեոի մոր հայտնությունը, որից «պիտի ծնվի աշխարհ ապականողը»: Սակայն այն, ինչ չարիք էր թվում «կույր նախապաշարմունքով» կաշկանդված թույլ մտքերին, լուսավոր գաղափարների մեջ ծլարձակում է բանականության լույսը՝ տոգորելով նրանց ազատության, մարդկային արժանապատվության զգացողություններով: Կրթությունը նրանց տալիս է որոշակի աշխարհայացք, և «համակերպված մոր ժամանակի պահանջներին»՝ նրանք մարտահրավեր են նետում հնությանը, քանի որ «բնական օրենքի» թելադրանքով «ամեն մի հնություն դիմում է դեպի ոչնչացում»: Մինչդեռ Սոֆիի օրինակը («Զահրումար») ինքնին առիթ է տալիս գաղափարական հերոսներին դատողություններ անելու ազգային դաստիարակության, կնոջ ազատության և ընտանիքում նրա ունեցած դերի մասին: Ե՛վ ահա, որպես հակադրություն,

³ Նույն տեղում:

Բաֆֆին ներկայացնում է հայ օրիորդի մի այլ տիպ, որը մարմնավորում է իր իդեալը: Ան-
նան՝ ազնվական այդ օրիորդը, առաքինության իսկական տիպար էր ու թեև չէր սովորել
ոչ մի վարժարանում, այլ ուսել էր հոր և եղբոր մոտ, մաքուր խոսում էր մայրենի լեզվով,
կրթված էր և զարգացած, խոսում էր «ամեն առարկայի վրա՝ ուսումնական, արհեստա-
կան, քաղաքական, կրոնական»՝ բոլոր հարցերում արտահայտելով իր առողջ դատողու-
թյունը և խելացի կարծիքը: Նա իր գրադարանում ուներ Եղիշե, Խորենացի, Նարեկ, Ազա-
թանգեղոս, Աբովյան, կարդացել էր «Հյուսիսփայլը» ու «Գամառ-Քաթիպայի» տես-
րակները, հետաքրքրություն ուներ դեպի «Քնար հայկական» ու առհասարակ ազգային
պարբերականները և այս ամենը լրացնում էր ընտանեկան պետքերի հոգացողությամբ:
Այսպես էլ նա դատում է ազգային դաստիարակության մասին. «Եթե մեր ծնողները լինեին
խելացի և իրանց աղջկերանց ազգային հիմնավոր կրթություն տային, այլևս ուրիշ ո՞ր ազ-
գի լեզուն կամ գրականությունը կարող էր գրավել հայ օրիորդի սիրտն ու հոգին» (2, 189):
Երբ Վահեն ակնարկում է, թե Աննայի ազգասիրությունը բացառիկ է, բայց ափսոս, որ
նրա կրոնասիրությունն ու բարեպաշտությունը հասնում են մոլեռանդության, Քաջբերու-
նին պատասխանում է. «Ի՞նչ մեծ կորուստ է, որ նա ծանոթ չէ Վոլտերի և Ռուսոյի հետ,
ավելի լավ է՝ կանանց լինել բարի քրիստոնյա, քան թե ազատ փիլիսոփաներ: Նիհիլիստ-
ների անբարոյական օրինակը քեզ բավական է իմ ասածս ապացուցելու»: Ինչպես նկա-
տում է Սարինյանը, այն փաստը, որ Սոֆին հետաքրքրություն է հանդես բերում Տուր-
գենևի և Պիսենսկու վեպերի, ինչպես նաև «կանանց ազատության» հարցը բարձրացնող
հեղինակների հանդեպ, ինքնին ցույց է տալիս նրա բարոյական ըմբռումների միակիս-
տական աղերսը և դատելով վեպի իդեալ-հերոսների կողմնորոշումից՝ Բաֆֆին անվերա-
պահորեն ծխատում էր միակիզված՝ այնտեղ նշմարելով առհասարակ բարոյական, ազգային
արժեքները ոչնչացնող չարիք՝: Վեպի գաղափարական հերոսները և Աննան ազգային լու-
սավորության վրա էլ խարսխում էին իրենց մտորումները՝ ընտանիքի, դաստիարակու-
թյան, դպրոցի, գրականության, ազգային լեզվի բարեկարգման վերաբերյալ՝ այստեղ իսկ
իրենց ռոմանտիկ երազները կանխելով արտոնյալ դասերի նյութական հովանավորու-
թյան ապարդյուն հույսերով: Եթե Վահեն անտարբերությամբ մերժում է Սոֆիի թախան-
ձանքները՝ թողնելով նրան բախտի քմահաճույքին, ապա Ռուբենը («Մինը այսպես, մյու-
սը այնպես»), նշմարելով Անիշկայի բնավորության մեջ քաքնված «լավ ընդունակություն-
ները և ազնիվ հակումները», պարտավորվում է ուղղել նրա կյանքի ծուռ ընթացքը, թեկուզ
և զուտ այլասիրական նկատառումով:

Հայ գրականության մեջ նոր երևույթ էր Վարդուհու կերպարը: Ազատամիտ, ամեն
կարգի պայմանակություններից ազատ այդ մենակյաց օրիորդը եղել էր Եվրոպայում,
հարստացրել իր հետաքրքրությունների աշխարհը ու թեև ձեռք չէր բերել հիմնավոր ուսում
ու անձնական կյանքի կայուն հեռանկար, այնուամենայնիվ գաղափարապաշտ էր, նպա-
տակասլաց: Սիրահար էր գեղարվեստին և ազգային մտավորականության մթնոլորտը
կենդանացնում էր ինքնամոռաց բարեգործական միլիտանտերով:

Նոր էր նաև Սոֆիի կերպարը: Նա թեև վաճառում էր իր մարմինը, բայց «խորտակ-
ված սրտի մոխրի մեջ» տակավին ուներ «շատ մաքուր և շատ անարատ կայծեր»: Ինքնին
ուշագրավ է հյուրանոցի «կարմիր սենյակում» պառկած Սոֆիի մերկության պատկերը, որ
Բաֆֆին զուգորդում է պատից կախված համապատասխան նկարների մանրամասն
նկարագրությունների հետ: Սարինյանը իրավացիորեն նկատում է, որ Բաֆֆին հայ գրա-
կանության մեջ բերեց կնոջ մերկությունը, սեռական վայելքի բիուրոգիական զգացումը՝
վկայակոչելով «Հարեմ», «Մինը այսպես, մյուսը այնպես», «Չահրումար» վեպերը, որոնք
գեղարվեստական պատկերի մի նոր էջ են բացում հայ գրականության մեջ: «Բիուրոգիա-
կան էության արթնացումները,- գրում է Սարինյանը,- որ յուրովի անդրադարձնում են
կնոջ ազատության, բարբերի այլափոխության նորահայտ միտումները, որոշակի ճեղ-
քեր են առաջ բերում ընտանիքի և բարոյականության ավանդական ըմբռումների մեջ՝

²⁵ Տե՛ս Ս. Սարինյան, Բաֆֆի, Եր., 1985, էջ 52:

ասպարեզ տալով արտամուսնական կապերի, դավաճանության, սեռական հաճույքի հագեցման կամ գրգիռներին: Սա բոլորովին այլ բան է, քան հարեմական բռնությունն ու բռնաբարության բնագոյական կիրքը, քանի որ իբրև սկիզբ ունեն կնոջ ազատ կամքի և բիոլոգիական եսի ինքնագիտակցումը: Հենց այս հանգամանքն է, որ արժեքայնության աստիճանի է բարձրացնում կնոջ ֆեմինները, միանգամայն նոր նշանակություն տալով մարդու բիոլոգիական կեցությանը»: Ճիշտ է, մարմնականի պաշտամունքը Բաֆֆին տակավին կախման մեջ էր դնում սոցիալական ու բարոյական նորմերից, այնուամենայնիվ, կնոջ գեղեցկության, կանացիության հրապույրների, տրվելու և մեթոքեցման հաճույքի կենսահոգեբանական իմանենտը հանդես է գալիս որպես ինքնաբավ վայելքի խորհրդանիշ:

Այսպիսով, Բաֆֆին համազգային լուսավորության իր ծրագրով առարկում էր սոցիալական ու կամայականությանը: Նման դիրքորոշումը ենթադրում էր ընտանիքի բարոյական ու նյութական վերածնունդ: Բաֆֆին այս հարցը քննարկում է կնոջ դաստիարակության և կրթության խնդրի հետ սերտ առնչությամբ: Առաջադեմ հայացքներով օժտված գրողը չէր ընդունում կնոջ իրավագուրկ վիճակի փաստը՝ սրբագործված մահապետական հնամենի օրենքներով՝ փոխարենն առաջադրելով կնոջ անհատական ազատության և նրա արդիական կրթության կարևորությունը: Բնաբան ընտրելով այն միտքը, որ կինն է տվյալ հասարակության քաղաքակրթության առանցքը, Բաֆֆին, ի տարբերություն Շիրվանգադեի⁷, չկարողացավ լիովին հեռանալ կնոջ և տղամարդու իրավահավասարության հարցում և Չոհրապի մեան վաղ էր համարում մեր իրականության մեջ կնոջ էմանսիպացիայի խնդիրը՝ պնդելով, որ կնոջն այդպիսի ազատություն տրամադրելը կհասցնի ընտանիքի հիմքերի վերջնական քայքայման: Կնոջ իրավիճակի շուրջը մտորելիս Բաֆֆու համար կարևորը մնում էր ընտանիքի բարոյական ու մտավոր վերածնունդի հիմնահարցը և ոչ ավելին: Ուստի պատահական չէ, որ նա առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում ընտանիքի ներսում կնոջ անհատական իրավունքների ընդլայնմանը: Բարոյաէթիկական այս պատկերացումը հասարակության վերածնունդը ենթադրում էր ընտանիքի վերածնունդից, և այս տեսակետից Բաֆֆու հայացքները կարևոր ու հրատապ են մնում: Ամուր ընտանիք՝ ամուր հասարակություն, որի մեջ անպայմանորեն մեծ է կնոջ դերը:

А. А. КАЛОЯН - Воззрения Раффи по вопросу эмансипации женщин. - Среди передовых мыслителей 19-го века Раффи одним из первых обратил внимание на женский вопрос. Он подробно описывает положение женщин в армянской действительности и приходит к выводу, что перед обществом стоит задача преодолеть отсталость, замкнутость, рабское положение женщин. В этой связи он акцентирует свое внимание на образовании женщин и расширении их индивидуальных прав, свобод в семье. Однако Раффи в своих подходах не проявил должной последовательности и ограничивал роль женщин, им отводя только определенные сферы деятельности.

⁷ Նույն տեղում, էջ 62-63:

⁸ Տե՛ս Ա. Քալոյան, Կինը 19-րդ դարավերջի հայ գրականության մեջ, Եր., 2005, էջ 92-133: